ՈՍԿՅԱ ԻՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ «ՀԿԱԾ-ԳՀ-22/01»

ք. Երևան «11» 01 **2022թ**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն (այսուհետ նաև՝ Ծառայություն, Պատվիրատու), ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի կողմից, և ԱՁ Գևորգ Հովհաննիսյանը, այսուհետ «Կատարող», ի դեմս Գ. Հովհաննիսյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պարբերաբար հանձնարարում է կատարել ոսկյա իրերի շուկայական արժեքի գնահատման ծառայություններ և Պատվիրատուին տրամադրել գրավոր հաշվետվություն /եզրակացություն/ (այսուհետ նաև՝ Ծառայություններ):

1.2 Սույն պայմանագրով պատվիրված գնահատումները կատարվում են Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված գնացուցակի համաձայն /հավելված 1/, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

1.3 Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Կատարողից պահանջել ծառայությունները մատուցել Պայմանագրով սահմանված ժամկետում:՝

2.1.2 Կատարողից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտականությունները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարողի միջնորդության դեպքում ծառայությունները մատուցելու համար նրան տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ:

2.2.2 Վճարել գնահատման կատարման արժեքը՝ համաձայն ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և դրանց անբաժանելի մաս կազմող արձանագրությունների հիման վրա:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Հանձնարարությունը ստանալուց հետո առնվազն մեկ օր առաջ Պատվիրատուից պահանջել տրամադրելու ծառայությունը մատուցելու համար անհրաժեշտ տեղեկություններ:

2.3.2 Պատվիրատուից պահանջել ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել սույն պայմանագրի առարկային վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

2.4.2 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել անձամբ և միայն Պատվիրատուի հանձնարարությամբ ու օրենսդրությամբ սահմանված կարգով, իր կողմից հաստատված և Պատվիրատուի հետ համաձայնեցված սակագներով, որոնք կարող են փոփոխվել կողմերի լրացուցիչ գրավոր համաձայնությամբ: Գնացուցակը և փոփոխված համաձայնագրերը հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:
2.4.3 Գնահատում կատարել և եզրակացությունները տրամադրել Պատվիրատուին անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից 10 օրվա ընթացքում:
2.4.4 Ծառայությունները մատուցելու անհնարինության դեպքում անհապաղ գրավոր հայտնել Պատվիրատուին:

3. Կատարման ժամկետները

3.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են գնահատման օբյեկտի և անհրաժեշտ նյութերի տրամադրման օրվանից 10 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան հանձնարարությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:
3.2 Եթե 3.1 կետում նշված ժամկետն անբավարար է Ծառայությունների մատուցման համար, ապա հանձնարարությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում Կատարողը պարտավոր է պատճառաբանված միջնորդությամբ դիմել Պատվիրատուին՝ ծառայությունների մատուցման փաստացի ժամկետը համաձայնեցնելու նպատակով:
3.3 Ծառայությունների մատուցման ժամկետը Պատվիրատուի կողմից կարող է յուրաքանչյուր անգամ երկարաձգվել մինչև մեկ ամիս ժամկետով:

4. Մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման կարգը

4.1 Կատարված աշխատանքները ընդունվում են Կատարողի և Պատվիրատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որը Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված 2 /երկու/ օրինակից /հավելված 2/, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությանը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:
4.3 Եթե Պատվիրատուն 4.2 կետում նշված ժամկետում չի ընդունում մատուցված ծառայությունը և /կամ/ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված 4.2 կետում սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը:

5. Պայմանագրի գինը և վճարման կարգը

5.1 Պայմանագրով պատվիրված խորհրդատվություններն կատարվում են Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված գնացուցակի համաձայն /հավելված 1/, որը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

5.2 Պայմանագրով նախատեսված մատուցված ծառայությունների դիմաց վճարելու հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ. Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ գումարը Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.3 Պատվիրատուն վճարումները կարող է կատարել գնահատված գույքի՝ օրենքով սահմանված կարգով իրացումից հետո:

6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծումը

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի:

6.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մեկ ամիս առաջ մյուս կողմին գրավոր տեղյակ պահելով:

6.3 Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, հայերեն լեզվով: Պայմանագրի մեկ օրինակը պահվում է Պատվիրատուի, իսկ մյուսը Կատարողի մոտ:

6.4 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումն իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

7. Վեճերի կարգավորումը

7.1 Պայմանագրի կատարման ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

7.2 Պայմանագրով չկարգավորվող, բայց դրա կատարման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8. Կողմերի վավերապայմանները

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Ք.Երևան, Հալաբյան 41ա ՀՎՀՀ 01223338 Հ/Հ 900011288025 Կենտրոնական Գանձապետարան Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. ԱՎԱԳՅԱՆ ստորագրություն Կ.Տ.	ԱՁ Գևորգ Հովհաննիսյան Տիգրանի Կոտայքի մարզ, Առինջ, Մաշտոցի 3-րդ փակուղի 3 ՀՎՀՀ 30966077 Հ/Հ 2475002764870000 «Արդշինբանկ» ՓԲԸ Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ստորագրություն Կ.Տ.

Հավելված N 1
« » 2022թ. Կնքված
«ՀԿԱԾ-ԳՀ-22/01» պայմանագրի

Գնացուցակ
Ծառայությունների մատուցման

Հ/Հ	Չափման միավոր հատ	Ծառայության արժեքը /ՀՀ դրամ/
1	1-ից 6 կտորը ներառյալ	10000
2	7 և ավել	10000 գումարած 1500 վեց հատը գերազանցող յուրաքանչյուր մեկ հատի համար

*Մեկ զույգը համարվում է մեկ հատ:

Պատվիրատու	**Կատարող**
Հարկաղիր կատարումն ապահովող ծառայություն Ք.Երևան, Հալաբյան 41ա ՀՎՀՀ 01223338 Հ/Հ 900011288025 Կենտրոնական Գանձապետարան Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. ԱՎԱԳՅԱՆ ստորագրություն Կ.Տ.	ԱՁ Գևորգ Հովհաննիսյան Տիգրանի Կոտայքի մարզ, Առինջ, Մաշտոցի 3-րդ փակուղի 3 ՀՎՀՀ 30966077 Հ/Հ 2475002764870000 «Արդշինբանկ» ՓԲԸ Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ստորագրություն Կ.Տ.

Հավելված N 2
« » 2022թ. Կնքված
«ՀԿԱԾ-ԳՀ-22/01» պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
ՀՀ _____	ՀՀ _____
_____	_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » 20 թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների

	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՊԱՌԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆՎ